

ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՅԱՌԱԶԱՆԱՅ ՀԱՐԱԽՅԻՆ ԻՏԼԻՊԻ ՄԷՋ

Կիրակի, 25 Օգոստոս 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ սուրիական բանակը կը շարունակէ յառաջխաղացք արձանագրել Իտլիպի հարավային արտարձաններուն ուղղութեամբ, թիրախ դարձնելով Մաարաթ ալ Նուհմանի, ալ Թահի, Թալմանասի, Մաարշորի-կի, Ճարճանագի եւ Իտլիպի հարավարեւելեան շրջանին մէջ կայք հաստատած «Ճապիաթ ալ Նուսրա»-ի զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն թաքստոցները: Չինեալ ահաբեկչական խմբաւորումները վնասներ կրելով Նահանջած են դէպի Իտլիպ:



Յիշենք, որ օրեր առաջ սուրիական բանակը իր վերահսկողութեան տակ առած էր Իտլիպի հարավային շրջանին մէջ գտնուող Խան Շէյխուն ռազմավարական շրջանն ու հիւսիսային Յամայի Լաթամետ, Զաֆար Չեթա, Լթմին, Մորեճ, Մաարքապէ եւ Լահայա գիւղերը:

Այս յառաջընթացը անել կացութեան մատնած է զինեալ ահաբեկչական խմբաւորումներն ու անոնց ետին կանգնած պետութիւնները:

ՆԱՍՐԱԼԱ. «ՍՈՒՐԻԱՆ ԼՈՒՋ ԲԱՅՆԵՐ Կ'ԱՌՆԵ ԴԵՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ»

ՍԱՆԱ. - Կիրակի, 25 Օգոստոս 2019-ին, սեյիտ Յասան Նասրալլա Արսալի ազատագրման երկրորդ ամեակին առիթով արտասանած իր խօսքին մէջ շեշտեց, որ Պէյրութի հարավային շրջանի օդային տարածքին մէջ իրայելեան օդուժին թափանցումին որպէս պատասխան, այսուհետեւ իսրայելեան իւրաքանչիւր ինքնաթիռ վար պիտի առնուի: Նասրալլա ըսաւ.



«Իսրայելեան ինքնաթիռները ոչ միայն կը խախտեն Լիբանանի գերիշխանութիւնը, այլեւ քաղաքացիներու կեանքեր կը խլեն: Զետեւարար այս օրուրնէ սկսեալ իսրայելցի մեր թշնամին թող իմանայ, որ իւրաքանչիւր ինքնաթիռ վար պիտի առնուի: Վերջ գտած է այն ժամանակաշրջանը, երբ Իսրայել կը ռմբակոծէր մեզ ու ապահով կը մնար»:

Նասրալլա խօսքը Իսրայելի ուղղելով ըսաւ.

«Սպասեցէք երկու, երեք կամ չորս օր. հիւսիսային Իսրայելի բնակչութիւնը կը զգուշացնեն: Բենիամին Նաթանիահուն ձեզ դէպի անդունդ կ'առաջնորդէ, ձեր երբեմնի խաղաղ կեանքը դեմ յանդիման դնելով Իրաքէն, Սուրիայէն եւ Լիբանանէն բռնկած հրդեհին»:

Ան շեշտեց, որ Սուրիա հաստատ քայլերով դէպի յաղթանակ կ'ուղղուի: Սուրիական բանակն ու Լիբանանի ազգային դիմադրութիւնը 2011-էն սկսեալ տարածաշրջանին դեմ հիւսուած դաւադրական ծրագիրը տասպալելու համար կը նկրտին: Այդ ծրագիրը կը միտի ոչնչացնել դիմադրական շարժումը, բաժնել տարածաշրջանը եւ տիրել անոր՝ ի նպաստ Իսրայելի:

Նասրալլա եզրափակելով՝ երախտագիտութիւն յայտնեց Սուրիոյ դեկավարութեան եւ բանակին՝ ահաբեկչութեան դեմ իրենց մղած անդու պայքարին համար, դիտել տալով, որ այդ գոհողութիւններուն շնորհիւ ահաբեկչութեան վտանգը լիբանանեան սահմաններէն ալ վերացաւ:

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԺՈՂՎՐԴԱԿԱՆ ՃԱԿԱՏԸ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՀՐԹԻՈՆԵՐՈՒ ԹԻՐԱՆ

Երկուշաբթի, 26 Օգոստոս 2019-ին, Լիբանանեան տեղական լրատուամիջոցները հաղորդեցին, որ առաւօտեան ժամերուն իսրայելեան պատերազմական «MK» մակնիշով ինքնաթիռ մը յարձակում գործած է սուրիական-լիբանանեան սահմանին վրայ գտնուող Զոսիա շրջանի Պաղեստինեան ժողովրդական ճակատին ընդհանուր ղեկավարութեան կեդրոնին ուղղութեամբ: Արձանագրուեցան նիւթական վնասներ:



Յիշենք, որ նախորդ շաբաթ, սուրիական օդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին Ռամասկոսի ուղղութեամբ արձակուած իսրայելեան հրթիռներուն:

ՍԱՆԱ-ի համաձայն, գիշերուան ժամը 11:30-ին, սուրիական օդային պաշտպանութեան համակարգերը նկատած են Կոլանի բարձունքներուն կողմէ Դամասկոսի ուղղութեամբ Իսրայելի արձակած հրթիռները եւ անմիջապէս հակադարձելով վար առած են անոնց մեծամասնութիւնը, նախքան թիրախին հասնիլը:

ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Սուրիոյ Պատանեկան Միութեան 2019 տարուան բանակումը տեղի ունեցաւ 16-23 Օգոստոսին, Մաարթէ Սէյտնայայի Մար Մանսուր վանքին մէջ:

ԱՔԵ ՃԵՄԱՐԱՆԻ շրջափակէն ներս հաւաքուեցանք եւ երբ մեր թիւը ամբողջացաւ, ծնողներուն «ցտեսութիւն» ըսելով ճամբայ ելանք:

Դեզասահ ճամբորդութիւն մը ունեցանք՝ երգելով, գրուցելով ու վերլիշելով նախկին բանակումները: Հասանք բանակավայր: Պատանիները բաժնուեցան խմբակներու եւ սկիզբ առաւ «Հայաստան» բանակումը:

Խումբերը կը կրէին Հայաստանի գանազան մարգերու անունները: Այսպէս՝ «Գեղարգունիք», «Արշալիր», «Սիւնիք» եւ այլն: Սա միջոց մըն էր նաեւ ծանօթանալու Հայաստանի մարգերուն: Պատանիները իրենց տնակներուն մէջ տեղաւորուելէ ետք, անցան օրակարգերու գործադրութեան: Ըստ մեր միութեան անանդութեան, բանակումները յազեցած կ'ըլլան դաստիարակչական նիւթերով... զրոյցներ, դասախօսութիւններ գանազան նիւթերու մա-



սին, դաշտային խաղեր, հայ ազատագրական պայքարի տարիներէն դուրս գնելու ներկայացում, երգերու ուսուցում եւ այլն: Բանակավայրէն դուրս պտոյտներ ալ կազմակերպուեցան դէպի շրաշխարհ եւ Մար Սարգիս, Մար Թագլա՝ «Մաալուլա» սրբավայրերը:

Պատանիները մօտէն ծանօթացան Սուրիոյ այս շրջանի պատմական սրբավայրերուն: Շատեր չէին իսկ գիտեր, որ Սուրիոյ մէջ գոյութիւն ունին այսպիսի գեղեցիկ ու խորհրդաւոր պատմական սրբավայրեր: Սա առիթ էր նաեւ ծանօթանալու Սուրիոյ քաղաքակրթութեան կարգ մը մանրամասնութիւններուն: Իրականութեան մէջ, Սուրիան եղած է նաեւ քրիստոնէաներու բնօրրանը, սրբավայրերը շատ բան կը պատմեն տեղւոյն քրիստոնէական մշակոյթին մասին:

«Հայաստան» բանակումի առաջին հիւր դասախօսն էր Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր Ռէստան: Ան ներկայացնելով Սուրիոյ խորհրդարանի աշխատանքները պատասխանեց պատանիներու հարցումներուն:

Եօթը օրուան ընթացքին պատանիները մաս կազմեցին տարբեր յանձ-

Սագօ Խայրեան

Շաբ. 19 14

«ՄԵԾ ՈՒԹՆԵԱԿ»Ը ԱՌԻԹ ՊԻՏԻ ԸՆԾԱՅԷ ՍՈՒՐԻՈՅ ԴԱՇՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ ՇԵՏՄԵՐՉԵՆԱԼՈՒ

Մինչ ԱՄՆ-ի նախագահ Տանըլտ Թրամփի պատրաստակամութիւն յայտնեց 2020-ին իր ռուս պաշտօնակից Վլադիմիր Փութինը «Մեծ Ութնեակ»ի գագաթնաժողովին հրաւիրելու, Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոն յայտնեց, որ Թրամփի եւ Իրանի նախագահ Հասան Ռոհանիի միջեւ հանդիպում մը կը նախատեսուի:



Ֆրանսական Պիարից քաղաքին մէջ տեղի ունեցած գագաթնաժողովին շրջագիծէն ներս գոյացած մամլոյ ասուլիսի ընթացքին, Թրամփ վերահաստատեց իր դիրքորոշումը՝ «Մեծ Ութնեակ»ի գագաթնաժողովին Ռուսիոյ մասնակցութեան շուրջ, զայն արդիւնաւետ քայլ մը համարելով «միջազգային անվտանգութեան եւ տնտեսութեան համար»: Բերմիլին հրաւերը մեկնաբանեց ըսելով. «Ռուսիոյ «Մեծ Ութնեակ» վերադարձը չի կրնար իրականանալ՝ սոսկ մէկ երկիրի հրաւերով»:

Այս առումով աղբիւրներ յայտնեցին, որ Թրամփ շեշտեց Ռուսիոյ մասնակցութեան անհրաժեշտութիւնը, ուր առիթ պիտի ընծայէ Իրանի, Սուրիոյ եւ Հիւսիսային Զորիայի առնչուող հարցերը քննարկելու: